

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Քաղաքացիական Ամուսնություններ

Վերջին Թարմացումներ.

11/28/20. Սույն ուղեցույցը ուժի մեջ է մտնում 2020 թ.-ի Նոյեմբերի 30-ից մինչև 2020 թ.-ի Դեկտեմբերի 20-ը ընկած ժամանակահատվածում, երբ կգործի **ՏԱՆՆ ԱՎԵԼԻ ԱՆՎՏԱՆԳ COVID-19-Ի ՎԵՐԱՅՍԿԱՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆՊԱՏԱԿԱՈՒՂՎԱԾ ԱՌՈՂՋԱՊԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԻ ՀՐԱՄԱՆԻ՝ ԿԱՐԳ 1 ՆՇԱՆԱԿԱԼԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ:** Քաղաքացիական հարսանիքները կարող են տեղի ունենալ այս երեք շաբաթվա ընթացքում, ինչպես նկարագրված է սույն ուղեցույցում:

Խստորեն սահմանափակ մասնակցությամբ հարսանիքները (քաղաքացիական արարողությունները) կարող են տեղի ունենալ, եթե բավարարում են հետևյալ սահմանափակումները.

- Ամուսնանալուց առաջ զույգը պետք է նախ ամուսնության արտոնագիր ստանա Շրջանային Գործավարից:
 - Չույգերը պետք է ներկայանան միասին, անձամբ և ցույց տան ինքնությունը հաստատող վավեր փաստաթուղթ՝ իրենց վկայականը ստանալու համար: Բացի այդ երկու անձանցից, այլ մարդ չի կարող ներկայանալ արարողությանը:
- Որպեսզի ամուսնության վկայականի հանձնումը պատշաճ կերպով կատարվի, ամուսնական զույգը, պաշտոնատար անձը և վկան երդումների փոխանակման ընթացքում պետք է տեսանելի լինեն միմյանց:
 - Չույգը պաշտոնատար անձի և վկայի հետ կարող է ներկա գտնվել Գրանցումների Շրջանային Գործավարի Գրասենյակ (RR/CC): RR/CC-ի մասնաճյուղային գրասենյակների ցուցակի համար՝ սեղմեք այս էջի ներքևում գտնվող հղմանը:
 - Չույգը կարող է միասին լինել ցանկացած վայրում և պաշտոնատար անձի և վկայի հետ կապվել տեսակոնֆերանսի միջոցով՝ կենդանի տեսանյութի և աուդիոյի ապահովմամբ՝ ըստ [Կալիֆոռնիայի 58-20 Գործադիր Հրամանագրում](#) շարադրված ուղեցույցների:
 - Չույգը կարող է օգտվել ներկա կամ պաշտոնաթող պաշտոնատար անձի ծառայություններից, որին թույլատրվում է Կալիֆոռնիայում քաղաքացիական ամուսնություններ գրանցել (այդ թվում՝ քաղաքապետներ, որոշ դատավորներ և այլն. տե՛ս [Կալիֆոռնիայում Ամուսնությունների Գրանցման Պաշտոնատար անձինք](#)):
- Անկախ նրանից, թե որ տարբերակն եք ընտրում, քաղաքացիական ամուսնության արարողության անձամբ մասնակցողների թիվը սահմանափակվում է.
 - Չույգով
 - Պաշտոնատար անձով
 - Վկայով
- Արարողության ընթացքում պետք է պահպանվի սոցիալական (ֆիզիկական) հեռավորություն (բացառությամբ՝ զույգից):
- Եթե զույգից մեկն ունի COVID-19-ի ախտանիշներ, ապա արարողությունը կարող է չկայանալ:
- Եթե վկան կամ պաշտոնատար անձն ունեն COVID-19-ի ախտանիշներ, ապա արարողությունը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, եթե հնարավոր է փոխարինող գտնել:
- Ծառայությունը կարող է ուղիղ հեռարձակվել՝ թույլ տալով այլ մարդկանց վիրտուալ մասնակցությունը: Այն կարող է նաև ձայնագրվել՝ հետագայում դիտելու համար: Երկու դեպքում էլ ձայնագրումը պետք է իրականացվի առանց լրացուցիչ մասնակիցների:

Նոր Կորոնավիրուս (COVID-19)

Լոս Անջելես Շրջանի Հանրային Առողջապահության Վարչություն Քաղաքացիական Ամուսնություններ

- Անհրաժեշտ է խուսափել այն առարկաների, սարքավորումների կամ պարագաների օգտագործումից, որոնք դժվար են ախտահանվում կամ դժվարացնում են սոցիալական (ֆիզիկական) հեռավորության ապահովումը:

Վկայականի կամ արարողության պայմանավորվածության ձեռք բերելու կամ ձեր քաղաքացիական ամուսնության արարողությունը կազմակերպելու համար լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար՝ այցելեք Լոս Անջելես Շրջանի Գրանցումների/Շրջանային Գործավարի կայք՝ [RR/CC կայք](#):